

## **Պատասխան**

2012թ. հունիս ամսին ֆրանսիայի MRE-ի (Անասնաբուծության շրջանային տուն) կողմից Լոռու մարզում կատարած փորձագիտական այցի և Լոռու մարզպետի 2012թ. տարեվերջին Պրովանս Ալպ Կոտ դ'Ազուր այցելություն արդյունքում սահմանվեց «Լոռու մարզում անասնաբուծության զարգացման համագործակցություն» ծրագիրը:

Այս ծրագրի նպատակն է ֆրանսիայի ՊԱԿԱ շրջանի Կարմեժանի լիցեյի ոչխարաբուծական ֆերմայի օրինակով Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանում հիմնել տնտեսություն՝ մատուցելու ոչխարաբուծությունը զարգացնելու, անասնապահների մասնագիտական գիտելիքները կատարելագործելու և այն արտադրության մեջ ներդնելու նպատակով: